Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-656[1]-28.08.2023-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 81.2-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «կամ սահմանված կարգով հատկացված վայրում չտեղադրելը» բառերը փոխարինել «իրականացնելը» բառով.
2. 2-րդ մասում «խախտումները, որոնք կատարվել են» բառերը փոխարինել «խախտումը, որը կատարվել է» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. ~~«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 81.2-րդ հոդվածի՝~~ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 81.2-րդ հոդվածի՝

3. 1-ին մասում «կամ սահմանված կարգով հատկացված վայրում չտեղադրելը» բառերը փոխարինել «իրականացնելը» բառով.

4. 2-րդ մասում «խախտումները, որոնք կատարվել են» բառերը փոխարինել «խախտումը, որը կատարվել է» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-656-28.08.2023-ՏՏԳԾ-011/1) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-656[1]-28.08.2023-ՏՏԳԾ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք լրամշակել մթնոլորտային օդի վրա տնտեսական գործունեության հետեւանքով առաջացած ազդեցության գնահատման սահմանումը՝ լրացնելով գնահատումը իրականացնող մարմնի և հասցեատեր սուբյեկտների վերաբերյալ կարգավորումները, ինչը կնպաստի նրան որպեսզի հասցեատեր սուբյեկտները կարողանան դրսևորել համապատասխան	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			վարքագիծ: Ըստ այդմ՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «իրավաբանական և» բառերից հետո լրացնել «և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող» բառերը, իսկ «արժեքային գնահատում» բառերից հետո լրացնել «որն իրականացնում է մթնոլորտային օդի պահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերը:		
2.	***ՀՀ կառավարություն***	**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը վերաբերվում են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի նույն դրույթին՝ առաջարկում ենք միավորել 1-ին և 2-րդ կետերը: Ըստ այդմ՝ Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել 2-րդ մասը, իսկ Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «կետից հետո» բառերը	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			փոխարինել «կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և» բառերով:		
3.	***ՀՀ կառավարություն***	**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 6-րդ հոդված**	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ առաջարկում ենք հանել Նախագծի 6-րդ հոդվածի վերնագիրը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
4.	***ՀՀ կառավարություն***	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված պահանջին, որի համաձայն. «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Ըստ այդմ՝ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			պարբերությունը առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 81.2-րդ հոդվածի՝»:		